

ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ԱՐԱԳ ԱՐՁԱԳԱՆՔՄԱՆ ԽՄԲՈՒՄ ՀԱՄԱԼՐՈՒՄ՝ ԲԵՐՄԱՆ ԵՆԹԱՐԿՎԱԾՆԵՐԻՆ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՌԱՋԻՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ

20.11.2020 21:29



Հարգելի փաստաբաններ,
11.11.2020 թվականին տեղեկացրել ենք, որ Հայաստանի Հանրապետության վարչապետի, Ադրբեջանի Հանրապետության և Ռուսաստանի Դաշնության նախագահների կողմից 09.11.2020թ. ստորագրված հայտարարության դեմ բողոքի ակցիա իրականացնելու հետևանքով բերման ենթարկված քաղաքացիներին իրավաբանական անվճար առաջին օգնություն տրամադրելու նպատակով ՀՀ փաստաբանների պալատում ձևավորվել է փաստաբանների արագ արձագանքման խումբ: Հաշվի առնելով բերման ենթարկված քաղաքացիների քանակով պայմանավորված արագ արձագանքման խմբում ներգրավված փաստաբանների ծանրաբեռնվածությունը՝ անհրաժեշտ է ապահովել փաստաբանների համալրումը խմբի աշխատանքներում:
Բոլոր ցանկացողները կարող են կապ հաստատել խմբի համակարգող Ռոման Ահարոնյանի հետ, հեռ.՝ 094 255 666:

Վերադառնալ \$(window).load(function(){ if(typeof \$(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt(\$(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })